ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ 2024-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտները ներառում են զանգվածային (մասսայական), մանկապատանեկան և բարձրագույն նվաճումների սպորտի ենթաոլորտները: Եռաստիճան այս համակարգի ամբողջ գործունեությունն ուղղված է մարդու ներդաշնակ և բազմակողմանի զարգացմանը, հանրության շրջանում առողջ ապրելակերպի և ակտիվ հանգստի արմատավորմանը, երկարակեցության ապահովմանը, սպորտի ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացմանը:

Սպորտային բարձր նվաճումների, առողջ ապրելակերպով (ներառյալ առողջ ֆիզիկական ակտիվությունը) բնակչություն ունեցող երկրի տեսլականի իրագործումն իրականացվում է ռազմավարական 2 հիմնական ուղղություններով՝

1. Ֆիզիկական ակտիվությունը և առողջ ապրելակերպը դարձնել ազգային կենսակերպ,
2. Հայաստանի Հանրապետությունը դարձնել սպորտային բարձր նվաճումների երկիր:

Ռազմավարության 2024 թվականի առաջընթացի սույն հաշվետվությունը ներկայացված է նշված երկու ռազմավարական ուղղությունների շրջանակում իրականացված միջոցառումների տրամաբանությամբ՝ դրանք խմբավորելով՝ ըստ ոլորտային նպատակների:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏ

Զանգվածային մարզական միջոցառումներին բնակչության մասնակցությունը խթանելու նպատակով հաշվետու տարում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցությունը զգալիորեն աճել է՝ ընդգրկելով ավելի լայն շրջանակներ, ինչպես նաև՝ ընդլայնելով դպրոցականների ներգրավվածությունը և խթանելով սպորտի գրավչության բարձրացումը:

Իրականացվել է «ՀՀ վարչապետի գավաթ» խորագիրը կրող 5 խոշոր մրցաշար, որոնց մասնակցել է 9 603 մարդ՝ 48%-ով ավելի, քան նախորդ տարի:

ՀՀ վարչապետի հովանու ներքո իրականացվել են նաև ուժային կառույցների միջև բանակային խաղեր, որոնց մասնակցել է ուժային և իրավապահ կառույցների 346 աշխատակից՝ նախորդ տարվա մասնակցությունը գերազանցելով շուրջ 2 անգամ:

ՀՀ վարչապետի գավաթի ևս 2 մրցաշարեր՝ սեղանի թենիսը և հեծանվավազքը, վերափոխվել են դպրոցականների շրջանում անցկացվող մրցաշարերի, որոնց մասնակցության նվազագույն շեմ է սահմանվել յուրաքանչյուր մարզի և Երևանի դպրոցների առնվազն 30%-ի չափով: Հեծանվավազքի կազմակերպման համար ձեռք են բերվել և հանրապետության բոլոր դպրոցներին են տրամադրվել շուրջ 6 500 հեծանիվներ: «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խորագիրը կրող 3

մարզական մրցաշարերը՝ սիրողական սեղանի թենիս, դպրոցականների թիմային խճուղավազք և խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարեր, այսպիսով, անցկացվում են դպրոցահասակ երեխաների շրջանում ճամբարային ձևաչափով:



Գծապատկեր 1. «ՀՀ վարչապետի գավաթ» խորագիրը կրող 5 մրցաշարերի մասնակիցների թվի դինամիկան 2023-2024 թվականներին

Անցկացվել են մարզական մասսայական այլ միջոցառումներ ևս, մասնավորապես՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառում, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա, Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր, Հանրապետական ուսանողական մարզական խաղեր, որոնց մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 40 634:

Ընդհանուր առմամբ, բոլոր մարզական զանգվածային միջոցառումներին, այդ թվում՝ հովանավորչական միջոցներով, 2024 թվականի ընթացքում մասնակցել է 50 583 մարդ՝ ապահովելով շուրջ 27%-ով ավելի մասնակցություն նախորդ տարվա համեմատ:

Ֆիզիկական կուլտուրայի նկատմամբ բնակչության դրական դիրքորոշում ձևավորելուն ուղղված միջոցառումների շրջանակում հանրությանն է ներկայացվել 2 ֆիլմ՝ «Մեդալի հակառակ կողմը» ֆիլմը՝ նվիրված աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն Նազիկ Ավդալյանին և «Ես բացեցի թևերս» ֆիլմը՝ նվիրված օլիմպիական խաղերի բազմակի չեմպիոն Ալբերտ Ազարյանին:

Իրականացվել են «Առողջ ապրելակերպի իրազեկման դպրոցական մարզային արշավներ» բոլոր մարզերում ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ (քայլերթ, սպորտլանդիա, առողջ ապրելակերպի պաստառների ցուցադրություն և այլն):

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում կարողությունների զարգացմանն ու մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի

ստեղծմանը միտված 2023 թվականից սկսած կազմակերպվում են ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացներ և ատեստավորման գործընթաց՝ վերջինիս արդյունքներով հավելավճարների տրամադրմամբ:

Հաշվետու տարվա դրությամբ ատեստավորմանը մասնակցել է 12 մարզաձևի (նախորդ տարվա 4 մարզաձևի փոխարեն) 272 մարզիչ-մանկավարժ կամ 22.64%-ը, նվազագույն շեմը հաղթահարել և ատեստավորված է համարվել 55-ը կամ շուրջ 5%-ը:



Գծապատկեր 2. Կամավոր ատեստավորմանը մասնակցած և նվազագույն շեմը հաղթահարած մարզիչ-մանկավարժների թիվը 2023-2024 թվականներին

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երկրի բոլոր բնակավայրերում առողջ ֆիզիկական ակտիվությամբ զբաղվելու համար հասանելի ենթակառուցվածքների, ներառյալ առնվազն երեք մարզաձևերով զբաղվելու հնարավորությունների ապահովմանը միտված իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներով կառուցվել է 10 մարզահրապարակ 4 մարզում,
- Կառուցվել է հանրակրթական դպրոցների 29 մարզադահլիճ,
- Երևանի քաղաքապետարանի կողմից կառուցվել է 60 մինի ֆուտբոլի դաշտ, վերանորոգվել է 2 մարզադպրոց,

- Համայնքներին տրվող սուբվենցիոն ծրագրով 5 մարզում կառուցվելու է 9 մարզադպրոց:

Յուրաքանչյուր մարզում բարձր նվաճումների սպորտի խթանման համար անհրաժեշտ սպորտային ենթակառուցվածքային համակարգի ստեղծումը ևս ոլորտի առաջնահերթություններից է: Վերջինիս համատեքստում շարունակվել են ենթակառուցվածքների զարգացման ծրագրերը, մասնավորապես՝ 98 մարզական կառույցի[1] հատկացվել է 146 անվանում մարզական գույք:

Ավարտվել է Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Սիմոն Մարտիրոսյանի անվան ծանրամարտի մարզադահլիճի կառուցումը, կառույցն ապահովվել է մարզագույքով:

Շարունակվել են՝

- «Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան դպրոց» նոր սպորտային համալիրի կառուցման աշխատանքները,
- Հեծանվային սպորտի և Հրանտ Շահինյանի անվան սպորտային, գեղարվեստական մարմնամարզության և ակրոբատիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցների շենքերի կառուցման աշխատանքները,
- «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի մարզադահլիճների վերակառուցման աշխատանքները,
- Երևանում, Արտաշատում, Իջևանում և Մարտունիում ֆուտբոլային չորս դպրոցների կառուցման աշխատանքները:

Ընթացքում են Արթուր Աբրահամի, Վիկ Դարչինյանի, Ռոման և Մալխաս Ամոյանների անվան մարզադպրոցների կառուցման նախապատրաստական աշխատանքները, ամփոփվում է Ջովունիում թեթև կոնստրուկցիաներով մարզադահլիճի հիմնման նախագծի փորձաքննությունը:

Միաժամանակ, մասնավոր ոլորտի գործընկերների հետ քննարկվել է մարզային բնակավայրերում տիպային մարզահամալիրների կառուցման և հետագա շահագործման հնարավորությունը, ինչի շրջանակներում կնքվել է հուշագիր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ու մասնավոր սպորտային համալիրի միջև՝ Եղեգնաձորում, Մարտունիում և Արարատում նման կառույցներ ձևավորելու և շահագործելու ուղղությամբ:

Սպորտի ոլորտում մի շարք ուղղություններով մեկնարկել են բարեփոխումների գործընթացներ, մասնավորապես, ստեղծվել է «Սպորտի կառավարման կենտրոն» ՓԲԸ-ն, որը հանդիսանում է սպորտային ենթակառուցվածքների գույքային կառավարիչը և ֆեդերացիաներին տրվող պետական ֆինանսավորման կառավարիչը՝ իրականացնելով անհրաժեշտ գնումների և հաշվապահական գործընթացները, ինչը կմեծացնի գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը և կնպաստի արդյունավետության աճին:

---

[1] *Ներառում է մանկապատանեկան 89 մարզադպրոց (28 ՊՈԱԿ, 61 ՀՈԱԿ), 5 մարզաձևերի ազգային ֆեդերացիաներ, 2 մարզական հասարակական կազմակերպություն, 2 մարզաառողջարանային և մշակութային կազմակերպություն:*

Ֆեդերացիաներին պետական աջակցությունը տրամադրվում է ֆինանսավորման նոր կարգով, որով սահմանվել են հստակ չափորոշիչներ, ինչպես նաև հավելյալ գործակիցներ՝ կախված տվյալ մարզաձևում մարզիկների ցուցաբերած արդյունքներից:

Մեկնարկել է ՀՀ դպրոցահասակ երեխաների լողի ուսուցման փորձնական ծրագիրը: Մասնավորի հետ համագործակցության նոր ծրագրի շրջանակներում մարզերում տեղակայված լողավազաններին տրվում է ֆինանսավորում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների համար: 2024 թվականին ծրագիրն իրականացվել է Ապարանում:

Մեկնարկել է մասնավորի հետ համագործակցության նոր ծրագիր, որի շրջանակներում մարզերում տեղակայված լողավազաններին տրվում է ֆինանսավորում դպրոցահասակ երեխաների լողի պարապմունքների համար: Ծրագիրն արդեն իսկ իրականացվում է Ապարանում:

Իրականացվել են փոփոխություններ «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքում, որով կարգավորվում են ֆիթնես կենտրոնների գործունեությունը, ինչպես նաև՝ վերջիններիս մարզիչների հավաստագրման կարգի սահմանման հիմքերը:

ԲԱՐՁՐ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՍՊՈՐՏ

2024 թվականին Հայաստանի մարզիկները նվաճել են 384 մեդալ, որից՝ 123 ոսկե, 107 արծաթե և 154 բրոնզե. նվաճած մեդալների համամասնության մեջ հաշվետու տարում աճել է ոսկե մեդալների մասնաբաժինը՝ կազմելով 32% նախորդ տարվա 28%-ի համեմատությամբ: Մեդալներից 50-ը կամ 13,8%-ը նվաճել են կանայք՝ նախորդ տարվա 25 մեդալի կամ 5,6%-ի փոխարեն, իսկ Հայաստանի հաշմանդամություն ունեցող մարզիկները միջազգային մրցաշարերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում նվաճել են 37 մեդալ՝ 18 ոսկե, 9 արծաթե և 10 բրոնզե:

Սպորտի ոլորտում շուրջ 7,3 մլրդ ՀՀ դրամի պետական ներդրումներ են իրականացվել, ինչը շուրջ 3,5 անգամ ավելի է 2018 թվականի նույն ցուցանիշից:



Գծապատկեր 3. ՀՀ մարզիկների նվաճած մեդալների թիվն ըստ տեսակների 2021-2024 թվականներին

Հաշվետու տարում նվաճած ոսկե մեդալների մասնաբաժնով առաջատարը երիտասարդների տարիքային խումբն է՝ 41.5% (նախորդ տարվա 31%-ի փոխարեն), նվաճած արծաթե և բրոնզե մեդալների մասնաբաժիններով առաջատարը՝ մեծահասակների տարիքային խումբը՝ համապատասխանաբար՝ 39.3% և 45.5%:

Պատանիների նվաճած մեդալներում 2024թ. գերակշռում են բրոնզե մեդալները՝ մասնաբաժինը՝ 47.6%: Երիտասարդներն ամենաշատը նվաճել են ոսկե մեդալներ՝ 41.8%, մեծահասակները՝ բրոնզե մեդալներ՝ 44.0%:

Երիտասարդների նվաճած ոսկե մեդալների մասնաբաժինն այդ տարիքային խմբի նվաճած ընդհանուր մեդալների կազմում ավելացել է 14.7%-ով, իսկ բոլոր տարիքային խմբերի նվաճած ոսկե մեդալների կազմում՝ 10.6%-ով:

Մեծահասակների խմբում ավելացել է բրոնզե մեդալների մասնաբաժինը՝ համապատասխանաբար այդ տարիքային խմբի նվաճած ընդհանուր մեդալների կազմում՝ 3.4%-ով և բոլոր տարիքային խմբերի նվաճած բրոնզե մեդալների կազմում՝ 11.8%-ով:



Գծապատկեր 4. ՀՀ մարզիկների նվաճած մեդալների թիվն ըստ տարիքային խմբերի 2021-2024 թվականներին

Շարունակվել են բարձր նվաճումներ ունեցող ***մարզիկների խրախուսման ծրագրերը:***

Տարվա ընթացքում 117 մարզիկ և մարզիչ ստացել են պատվովճարներ ամսական ընդհանուր շուրջ 14,4 մլն ՀՀ դրամի չափով: 2023 թվականին ցուցաբերած մարզական արդյունքների համար 2024 թվականին անվանական թոշակ է հատկացվել (այդ թվում նաև՝ վարկանիշի ձեռք բերման համար) ընդհանուր առմամբ շուրջ 432 մարզիկների և մարզիչների:

Միանվագ տարեվերջյան պարգևատրում է ստացել 178 մարզիկ, մասնավորապես, 53 մարզիկ ստացել է մինչև 500000 ՀՀ դրամ, 29 մարզիկ՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ և 96 մարզիկ՝

1 մլն ՀՀ դրամից ավելի գումար՝ տարվա ընթացքում իրենց գրանցած հաղթանակների համար:

2024 թվականին վերափոխվել է տարվա լավագույն մարզիկների մրցույթը: Սահմանվել են անվանակարգեր՝ լավագույն 3 մարզիկներ, լավագույն կին մարզիկ, հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ, լավագույն թիմ (խաղային մարզաձևեր և շախմատ), լավագույն երիտասարդ մարզիկ, վերադարձ մեծ սպորտ և/կամ հայտնություն, Հայաստանի Հանրապետությունը լավագույնս հանրահռչակած մարզիկ, լավագույն մարզիչ: Սահմանվել է նաև հանդիսատեսի համակրանք անվանակարգը՝ առցանց քվեարկությամբ՝ նպատակ ունենալով նպաստել սպորտի մասսայականացմանը: Հաղթողները պարգևատրվել են 6 մլն 250 հազարական ՀՀ դրամով:

Ամառային օլիմպիական խաղերին ընդառաջ՝ մինչև Փարիզ-2024 օլիմպիական խաղերի ավարտը բարձր արդյունքներ ցուցաբերած 90 մարզիկների, մարզիչների, բժիշկների և մերսողների տրամադրվել է սպորտային նպաստ, իսկ հունիսի 1-ից մինչև օգոստոսի 1-ը սպորտային նպաստ է ստացել արդեն իսկ վարկանիշ ձեռք բերած 12 մարզիկ, նրանց մարզիչները, բժիշկներն ու մերսողները (մարզիկներից յուրաքանչյուրը վերջին երկու ամսում ստացել է ամսական 1 մլն ՀՀ դրամ):

Սպորտային ժամանակակից բժշկագիտամեթոդական և բժշկավերականգնողական համակարգի ձևավորման համատեքստում Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական պոլիկլինիկայում գործում է սպորտային բժշկության կենտրոն, ՀՀ հավաքականների տարբեր տարիքային խմբերի մարզիկները բուժզննում և բժշկական օգնություն են ստանում կենտրոնի կողմից:

Ուշադրության կենտրոնում է պահվել հակադոպինգային քաղաքականության աշխատանքներին համապատասխանությունը, մասնավորապես, «Սպորտում դոպինգի դեմ պայքարի մասին» միջազգային կոնվենցիային, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» օրենքում կատարված հակադոպինգային գործունեության փոփոխություններին, Համաշխարհային հակադոպինգային օրենսգրքին և միջազգային պահանջներին: Հաշվետու տարում Հայաստանի ազգային հակադոպինգային կազմակերպության կողմից իրականացվել է 432 թեստավորում, 282 արյան նմուշառում, 40 սեմինար պարապմունքների անցկացում:

Կնքվել է հակադոպինգային ոլորտում համագործակցության մասին փոխըմբռնման հուշագիր ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և ՀՀ ներքին գործերի նախարարությունների միջև: Հանրակրթական դպրոցներում ծրագիր է իրականացվում դոպինգի դեմ պայքարի իրազեկման ուղղությամբ:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի միջազգայնացման համատեքստում ՀՀ կառավարությունը շարունակել է միջազգային մրցաշարեր հյուրընկալելու քաղաքականությունը. հաստատվել է Ֆրանկոֆոնիայի 10-րդ մարզա-մշակութային խաղերը 2027 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու հայտը: Ակնկալվում է, որ խաղերը կունենան շուրջ 4 000 մասնակից ավելի քան 50 երկրից:

Երևանում անցկացվել են մի շարք միջազգային մրցաշարեր, մասնավորապես՝

- բասկետբոլի աշխարհի առաջնության ընտրական փուլի Հայաստան-Ավստրիա խաղը, որին ներկա է եղել շուրջ 4 200 հանդիսատես,
- սպորտային պարերի աշխարհի երիտասարդների լատինաամերիկյան առաջնությունը, որին մասնակցել է 31 երկրի 120 ներկայացուցիչ (Հայաստանի հավաքականը նվաճել է 1 բրոնզե մեդալ), մրցմանը ներկա է եղել 400 հանդիսատես,
- Զինվորականների ըմբշամարտի աշխարհի 37-րդ առաջնությունը, որին մասնակցել է 26 երկիր 407 մասնակցով (Հայաստանի բանակայինների հավաքականը նվաճել է 3 ոսկե, 3 արծաթե և 8 բրոնզե մեդալ),
- ՈՒԵՖԱ-ի ֆուտզալի չեմպիոնների լիգայի եզրափակիչ մրցաշարը, որին ներկա է եղել 10 880 հանդիսատես:

Միջոցառումների ընթացքում պահպանվել են «Մագլինգենի» կոնվենցիայի վավերացման մասին օրենքի պահանջները: